ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄ ՍԵՎԱՆԻ «ՎԱԶԳԵՆՅԱՆ» ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին, Խաչվերացի տոնի նվիրական օրը, Սևանա կղզու Սուրբ Առաքելոց եկեղեցում մատուցված Սուրբ Պատարագից հետո, «Վազգենյան» դպրանոցի 7-րդ ուսումնական տարվա բացման հանդիսությունը նշանավորվեց ևս մեկ իրողությամբ (դպրանոցը ճանապարհում էր իր անդրանիկ շրջանավարտներին): Ինը սարկավագներ, մեկ տարի ևս ուսանելով Գևորգյան մայր Մեմարանում, հոգևորականի իրենց նպաստը պիտի բերեն Հայ Եկեղեցուն և ժողովրդին:

Հանդիսությունը նախագահում էր գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը: Ներկա էին դպրանոցի տեսուչ արժանապատիվ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը, տեսչությունը, դասավանդող դասախոսներ, հյուրեր, ուսանողների ծնողներ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով: Դպրանոցի սաների կատարմամբ հնչեց Հոգևոր Մեմարանի քայլերգը: Այնուհետև բարիգալստյան և բարեմաղթանքի խոսքով ներկաներին ողջունեց դպրանոցի տեսուչ Տ. Մինաս քահանան:

Տ. Մինաս քահանան խորին շնորհակալության խոսք ուղղեց Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանին՝ դպրանոցի նկատմամբ նրա հանապազօրյա հոգածության համար՝ վստահություն հայտնելով, որ նոր ուսումնական տարին առավել բեղմնավոր կլինի, արժանի այն ջանքերին, որ ներդրվում է այստեղ՝ ի նպաստ նվիրյալ և պատրաստված հոգևորականների ձևավորման:

Իր խոսքում դպրանոցի հիմնադրման պատմությանն անդրադարձավ նրա գոյության առաջին իսկ օրերից այստեղ դասավանդող պրն. Ս. Բեհբուդյանը: Մասնավորելով իր խոսքը՝ նա ընդգծեց հոգևոր դպրանոց հիմնելու Գարեգին սրբազանի համարձակ և պատասխանատու նախաձեռնության նկատմամբ երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հովանավորությունը, որ բխում էր Հայ Եկեղեցին շեն ու բարգավաճ տեսնելու նրա մեծ երազանքից: Օնորհավորելով դպրանոցն ավարտողներին և նոր ընդունվողներին՝ հարգարժան դասախոսն իր համոզումը հայտնեց, որ նրանք և բոլոր սաները բարձր կպահեն դպրանոցի «Վազգենյան» լուսապսակ անունը. «60 տարի բռնի լռեցրած Սևանի հոգևոր մենաստանը ձեզ հետ ու ձեզնով կյանք ստացավ...»: Դասախոս Ա. Գաբրուճյանն ասաց, որ մյուռոնօրհնեքի տոնի առիթով Սուրբ Էջմիածին բերված լավագույն ընծան Գարեգին սրբազանի աջով բարձրացած հոգևոր դպրանոցի շրջանավարտ սարկավագներն են, իրենց խոստումնալից մուտքով մայր Մեմարանի ավարտական լսարան:

Ներկա հյուրերից Երևանի Պետական Համալսարանի դասախոս Բարմիկ Մեժունցը իր խոսքում ընդգծեց այն գեղեցիկ տպավորությունը, որ ստացավ այստեղ: Իրենց շրջանավարտ ընկերներին բարեմաղթանքի խոսքեր ուղղեցին Արտակ Արթենյանը (5-րդ լսարան), Բաբկեն Նանյանը (4-րդ լսարան), Վարդգես Մանուկյանը (3-րդ լսարան), Արամ Ղևոնդյանը, Լևոն Պանֆյորովը (2-րդ լսարան): Նրանք հիշեցին դպրանոցի առաջին տարիների անբարեկարգ վիճակը, երբ հաճախ կերակուր էին եփում իրենք՝ դրսում արված օջախի վրա, ուտում ընդհանուր ամանից, ապրում և ուսանում նույն մասնաշենքում՝ մասնակցելով մյուսների վերակառուցմանը, ուսման ընթացքին զուգահեռ: Իրենց ընկերների

մեկնումը բոլորի հոգին լցնում է թախիծով: Լուսավոր է այդ թախիծը. ինչ պակասելու է դպրանոցից, հավելիով ավելանալու է Հայ Եկեղեցու շինվածքին: Անցած դժվարությունների բովով ձուլվել են նրանք ինչպես ազնիվ մետաղ, որ թրծվելով Գարեգին սրբազանի և երկու Հայրապետների քուրայով, անկասկած դառնալու է լույս բաշխող կանթեղ:

Օրջանավարտ սարկավագների անունից Սրբազան Հորը, տեսչությանը, դասախոսներին իրենց երախտիքի խոսքը բերեցին Ադամ սարկավագ Տոնիկյանը և Տիգրան սարկավագ Գափոյանը: Նրանք շեշտեցին պատասխանատվության այն խոր զգացումը, որով բաժանվում են դպրանոցից, ուր իրենք ձևավորվել են ու կերտվել:

Հանդիսության ընթացքում սաների կատարմամբ հնչեցին շարականներ, հայրենասիրական երգեր, ասմունք:

Վերջում ներկաներին իր օրհնությունը բերեց Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը: Ծնորհավորելով նրանց և ուսումնական նոր տարեշրջանի բացման, առաջնեկ շրջանավարտներ ունենալու բերկրալից պահի առիթով, նա կարևորեց այն նպատակը, որի տեսիլքով հիմնվել է դպրանոցը՝ ի մասնավորի ասելով. *«1980-90-ականներին թևածող ազատության շունչը, հոգևոր վերազարթոնքի տրամադրությունները չէր կարելի անտես առնել: Ընդառաջ չգնալ անհրաժեշտությանը, նշանակում էր մնալ հանցավոր անգործության դիրքերում: 70-ամյա բռնատիրության պայմաններում Եկեղեցին դուրս էր մղվել ժողովրդի կյանքից, հայ հոգևորականը հնարավորություն չուներ լիաթոք շնչելու և գործելու, կերտելու իր և ուրիշների նկարագիրը: Այդ բռնատիրության տապալումով բացված ասպարեզը բացահայտ դարձրեց հոգևոր մշակների սղությունը: Ժողովրդին Քրիստոսի Խաչի լուսավոր ուղին առաջնորդելու, իր կորցրած արժեքները վերագտնելու համար անհրաժեշտ էր և է՛ լայն հունով նրա կյանքի մեջ ներգրավվելը: Նոր նկարագրով, ազատության շնչով կերտված քաջամիտ ու քաջագործ հոգևորականներ են պետք՝ բարձրացնելու համար հայ հոգևորականի անունը հայ իրականության մեջ, վերադարձնելու Հայ Եկեղեցուն իր փառքը: Նպատակն արժե, որ ամեն ջանք ուղղված լինի դրան: Եթե գրեթե ոչնչից այսօր ոտքի է կանգնել դպրանոցը, ուրեմն Աստծո օրհնությունն էլ մեզ հետ է, Աստված հարթում է իր ճանապարհը»:*

Այնուհետև Սրբազան Հայրը ներկայացրեց առաջիկա օրերին սկսվող շինարարական աշխատանքները՝ եկեղեցու, նոր հանրակացարանի, այլ մասնաշենքերի ու կառույցների ավարտը նախատեսելով երկու և կես տարվա ընթացքում:

Իր հայրական խոսքն ուղղելով շրջանավարտ սարկավագներին՝ Սրբազանն ասաց. *«Այսօր ամեն հայ ընտանիք Սևանի ջրերից ծնված լույսը տեսնում է իր տանը: Ձեզանով և ձեզ հաջորդողներով է գալու այն բաղձալի օրը, երբ հայ օջախները պիտի լուսավորվեն երկնամերձ Սևանից ճառագող իմանալի՛ լույսով... Անդրանիկության և՛ իրավունքը, և՛ պատասխանատվությունը ձերն է»:*

Հոգևոր դպրանոցի վերաբացման հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի երգեցողությամբ և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ
«Վազգենյան» դպրանոցի դասախոս